Արձանագրություն N 4

<<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

ք. Երևան 21.04.2017թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Գ. Գևորգյան /գնահատող/
	Կ. Բայբուրտյան/ բացող /
	Ա. Գրիգորյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանության շտկման մասին

(Ա. Ջանջուղազյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում <<ՏԱՄՈ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունը, իսկ <<ՄԱՌՔ>> ՍՊԸ-ի և <<ՀԱՅԿԱՍԱՐ>> ՍՊԸ-ի կողմից՝ չեն շտկվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տեղեկություններ <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակիցների անվանումը	Հայտի գնահատականը
<<ՏԱՄՈ-ՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
<<ՄԱՌՔ>> ՍՊԸ	անբավարար
<<Բագարանի բարիք>> ՓԲԸ	բավարար
<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	բավարար
<<ՀԱՅԿԱՍԱՐ>> ՍՊԸ	անբավարար
<<ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն>> ՓԲԸ	բավարար
<<Արման-Թաման>> ՍՊԸ	բավարար

**Մասնակիցների անբավարար գնահատականի հիմնավորումը ներկայացված է սույն ընթացակարգի թիվ 3 արձանագրության 1.1 և 1.2 կետերում:*

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին ծանուցելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ <<ՏԱՄՈ-ՇԻՆ>> ՍՊԸ-ին, երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3.3 Հրավերով սահմանված ժամկետում 5.2 կետում նշված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

4.1 Պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի ապրիլի 28-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	----------	Ա. Ջանջուղազյան
Անդամ՝	----------	Ռ. Եղիազարյան
	----------	Գ. Գևորգյան
	----------	Կ. Բայբուրտյան
	----------	Ա. Գրիգորյան
Քարտուղար	----------	Տ. Վասիլյան